



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

դեկտեմբերի 2017 թվականի N°Ա  
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՅԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով,

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից իրականացված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերաբերյալ 2017 թվականի 2-րդ եռամսյակի տեղեկատվության մոնիթորինգի արդյունքները, համաձայն որոնց՝ նշված ժամանակահատվածում խախտվել են Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N°358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.5 կետով սահմանված առավելագույն ժամկետները,

բ) այն, որ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ վերը նշված փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) Ընկերության 2017 թվականի հոկտեմբերի 25-ի N°04-ԴԳ-02/3525 գրությունը, որով վերջինս, չհերքելով թույլ տրված խախտումների փաստը, ներկայացրել է տեղեկատվություն խախտումների դեպքերի առնչությամբ արդեն իսկ իրականացված աշխատանքների վերաբերյալ.

դ) որ լրացուցիչ ուսումնասիրությունների իրականացման նպատակով սահմանված ժամկետը երկարաձգվել է 2 անգամ՝ 10-ական օրով,

ե) որ Ընկերությունը, գործող իրավակարգավորումների համաձայն, պարտավոր էր Կանոնների 13.5-րդ կետով սահմանված ժամկետում ավարտել Սպառման համակարգերի միացումն էլեկտրական ցանցին,

զ) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը չի կատարել Կանոնների 13.5-րդ կետի պահանջը՝ խախտելով որոշ սպառողների իրավունքները, և՝

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը, 5-րդ կետի «գ» ենթակետը և 6-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 13.5-րդ կետը խախտելու համար Ընկերությանը ենթարկել տուգանքի՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝
  - 1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
  - 2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**